ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

4 նոյեմբերի 2016 թվականի N 172-Ա

«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) ենթակետով և հիմք ընդունելով <<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հ.Դավթյանի անձնական դիմումը,

կարգադրում եմ՝

1.2016թ. նոյեմբերի 7-ից լուծել <<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հովիկ Դավթյանի հետ 2015թվականի մայիսի 7-ին կնքված N 3 աշխատանքային պայմանագիրը և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

2. 2016թ. նոյեմբերի 7-ից <<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել ընկերության տնօրենի տեղակալ Վիրաբ Մանասյանին մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝Վ Մանասյանի անձնական դիմումը:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գևորգյան Նունե	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Դավթյան Սուսաննա	մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ասրյան Աշոտ	մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Դավթյան Հովիկ	<< Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ նախկին տնօրեն, հանձնող
Մանասյան Վիրաբ	<<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

4.Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ.նոյեմբերի 4
ք. Կապան